ՀՈՎՀԱՆՆԵՍ ՋԱՏԻԿՅԱՆ

ԿԱՐԻՆԻ ՆԱՀԱՆԳԻ ԲԱԲԵՐԴԻ ԳԱՎԱՌԱԿԻ ՍՐԲԱՎԱՅՐԵՐԸ
(19-րդ դարի երկրորդ կես)

Ճորոխ գետի վերին հոսանքում, նրա ակունքների մոտ փռված հովիտներում և ալպյան լեռնալանջերում, հյուսիսում՝ Խաղտյաց լեռներ, արևմուտքում՝ Տրապիզոնի նահանգ, հարավում՝ Կարինի գավառ, արևելքում՝ Սպերի գավառակ հասնող սահմանների մեջ տեղավորված է Կարինի (Էրզրումի) նահանգի Բաբերդի գավառակը:

Գավառակի մասին Կարինի Ս. Աստվածածին վանքի վանահայր Հակոբ Կարնեցին գրում էր. «Ելանէ ձկունք անթիւ եւ զանազան... Եւ է երկիրս այս հացալից, ջրավետ, խոտալիր, ոչխարօք եւ անասնօք ի լի, իւղ եւ մեղր սպիտակ եւ անթիւ, որ հիանալի է տեսօղացն. եւ ունի սինօր մինչեւ ի Հոռոմոցն եւ Սեւ ծովու յափն եւ Ըսպիրու»[1]:

Արտաշեսյան հարստության ժամանակ Բաբերդի գավառակը գտնվում էր Մեծ Հայքի կազմում: Արշակունիների կառավարման տարիներին գավառակը պատկանում էր Բագրատունիների նախարարական տանը: Հայաստանի առաջին բաժանումից հետո (387 թ.), գավառակն ընկավ Բյուզանդական կայսրության տիրապետության տակ: 11-րդ դարում գավառակը ենթարկվեց սելջուկների ավերիչ արշավանքներին: 13-14-րդ դարերում այստեղ իրենց իշխանությունը հաստատեցին Իկոնիայի սուլթանությունը, ապա ակ-կոյունլուները: 17-րդ դարում, երբ ավարտվեցին թուրք-պարսկական պատերազմները, 1639 թ. Դիարբեքիրի պայմանագրով գավառակը միացվեց օսմանյան կայսրությանը: 1882 թ. վարչական բաժանումից հետո այն մտավ Կարինի նահանգի կազմի մեջ:

Գավառի գյուղերի մասին ունենք իրարամերժ ու հակասական տեղեկություններ, որոնց համադրումից, վերլուծություններից հետո կարելի է ընդունել, որ նշված ժամանակահատվածում գավառակում կային 29-30 հայաբնակ գյուղեր:

---

[1] Կարնեցի Հ., Տեղեկագիր Վերին Հայոց, Վաղարշապատ, 1903, էջ 16:



ԲԱԲԵՐԴԻ ԳԱՎԱՌԱԿ

Քրիստոնեությունը որպես պետական կրոն ընդունելուց հետո Բաբերդը հանդիսացել է Հայ Եկեղեցու նշանավոր բնակավայրերից մեկը: Գավառակի գրեթե բոլոր գյուղերում գործել են եկեղեցիներ, նրա տարածքում կային մի քանի մատուռներ, սրբավայրեր, աղոթատեղիներ: Եկեղեցիների մեծ մասը ավերվեցին արաբական, սելջուկյան, մոնղոլական, թուրքմենական ցեղերի ասպատակությունների ժամանակ: Այս պատճառով էլ վերաշինվում ու կառուցվում էին նոր եկեղեցիներ, և դժբախտաբար հատուկենտ տեղեկություններից բացի մեզ չեն հասել առավել արժեքաշատ տեղեկություններ ու վկայություններ գավառակի սրբավայրերի մասին, և տարօրինակ չպետք է թվա, երբ ներկայացվող գյուղերի եկեղեցիների մեծ մասի որպես կառուցման ժամանակ նշվում է 19-րդ դարը:

ԲԼՈՒՐ գյուղը, որը գտնվում էր գավառի արևմտյան մասում և սահմանակից էր Տրապիզոնի նահանգին, ուներ բավականին բարեկարգ մի եկեղեցի: Ս. Գևորգ եկեղեցին կառուցվել է 1840 թ.: Գործող եկեղեցի էր, ուներ մեկ քահանա: Եկեղեցին ունեցել է 8 դեսյատին կալվածք, որի միջոցների զգալի մասը հատկացվել է վարժարանի պահպանմանը: Համիդյան կոտորածներից հետո, երբ բարբարոսապետությունը իրականացրեց հայության կոտորածների առաջին փուլը, եկեղեցին վերածվեց մզկիթի, որովհետև կոտորված, հայությունից զրկված գյուղում բնակություն հաստատեցին քոչվորական նոր ցեղեր: Հիշատակելի է նաև այն փաստը, որը հաստատում է հայակուլ ուժերի գործելակերպի ընդհանրությունը: Եկեղեցու քահանայի սպանությունից հետո, ինչպես հաճախ էր կատարվում, կենդանի մնացած հայերը բռնի կրոնափոխվում են:

Բլուր գյուղից հարավ գտնվում էր Ս. Մարտիրոս եկեղեցու ավերակները, նրա մոտակայքում էին Ս. Եղիա և Ս. Վարվառե անուններով աղոթատեղի-սրբավայրերը: Պետք է ենթադրել, որ վերջին երեք սրբավայրերն էլ ավերվել են վերը նշված ժամանակահատվածում, և հայերը ստիպված կառուցել են նոր եկեղեցի:

Բալախոռի դաշտում, Ճորոխ գետի ձախ ափին, Բաբերդ քաղաքից հարավ-արևելք, գտնվում էր **Բլրակ** գյուղը: Բլրակի մասին հետաքրքրաշարժ տեղեկություններից մեկը պատմում է, որ գյուղի մոտակայքում է գտնվել Ս. Կիրակոս անունով մի աղբյուր-ուխտավայր, որը բուժում էր բոլոր հիվանդությունները: Գյուղի հյուսիսային կողմում էր տեղադրված «Կապույտ խաչ» հանրահայտ խաչքարը, որի պաշտամունքը կատարվում էր Համբարձման տոնին[2]:

ԳՐԶԻ գյուղի Ս. Պետրոս եկեղեցին կառուցվել է 1848 թ.: Եկեղեցին նշանավոր է իր ձախակողմյան խորանի մեջ երևացող «սահագնահայաց» պատկերով[3]: Ավանդության համաձայն, պատկերը երևացել է այն ժամանակ, երբ ժողովրդին աղետ է սպասվել:

Ճորոխի աջ ափին էր գտնվում գավառակի ամենահայաշատ գյուղը՝ **ՔԱՐԱՎՐԱԿԸ**: Գյուղն ուներ երկու եկեղեցի: Նրանցից մեկի քահանան Մինաս Ղարա-

---

[2] ՀՀՊԿՊԱ, ֆ. 57, ց. 1, գ. 146, թ .2:

[3] Նույն տեղը, գ. 234, թ. 12, 15, 16:

պարոնյանն էր, որը հայրենասեր ու անգամ թուրքերի և քրդերի կողմից հարգված մարդ էր: Ս. Աստվածածին և Ս. Գևորգ եկեղեցիները զուլումի տարիներին զրկվեցին իրենց կալվածքներից[4]:

Բաբերդ քաղաքից 12 կմ հեռու՝ Ծորոխի վերին հոսանքի մոտ էր գտնվում **ԽՈՒԲՍ** գյուղը: Հանրահայտ էին գյուղի Ս. Փրկիչ, Ս. Եղիշե, Ս. Վարվառե եկեղեցիները, որոնք կառուցվել էին համապատասխանաբար՝ 541, 1264, 1276 թվականներին: Գյուղի մոտ էր գտնվում հանրահայտ Ս. Քրիստափորի վանքը, ուր կատարվող ուխտագնացությունները բազմամարդ էին դառնում հատկապես Վարդավառի տոնին: Վանքն ուներ 750 դեսյատին կալվածք[5]:

Ս. Թորոս գյուղն ուներ Ս. Սարգիս անունով գործող եկեղեցի: Քահանա Սահակ Գինոսյանի ջանքերով և գյուղացիների օժանդակությամբ գործում էր եկեղեցուն կից վարժարանը, որի գրադարանը ուներ նշանավոր գրքեր ու ձեռագրեր[6]:

ՔՍԱՆԹԱՑԸ գավառակի երկրորդ խոշոր հայաբնակ բնակավայրն էր: Գյուղն ուներ երեք եկեղեցի, որոնցից երկուսի անունն է հայտնի՝ Ս. Աստվածածին և Ս. Եղիա[7]:

Վարզահան, Վարզըհան գյուղը հանրահայտ է իր կենտրոնագմբեթ եկեղեցիով, որը հայ ճարտարապետության եզակի կառույցներից է: Նկատի ունենալով խնդրի մեծ կարևորությունը, ամբողջությամբ ներկայացնում ենք եկեղեցու մասին Մորուս Հասրաթյանի նկարագրությունը:

- Վարզահանում կանգուն է ինքնատիպ հորինվածքով ութաբսիդ եկեղեցին (12-րդ դար): Նրա ութանիստ գմբեթատակ տարածության անկյուններում սյուներ են, և միայն բեմի պայտաձև խորանն ունի պատեր: Մյուս աբսիդները, որոնք հատակագծում սեղանաձև են, հաղորդակցվում են միմյանց հետ կամարակապ մեծ բացվածքներով և ծածկված են այդ կամարների ու տրոմպների վրա հենվող գմբեթարդներով: Բեմի խորանն ունի երեք, իսկ մյուս աբսիդները՝ կրկնակի լուսամուտներ: Մուտքերը երեքն են՝ հյուսիսից, հարավից և արևմուտքից: Գմբեթը (չի պահպանվել) ունեցել է ութանիստ թմբուկ: Ճակատները դրսից զարդարված են կիսասյունիկներով և միայն դեկորատիվ նշանակություն ունեցող եռանկյունաձև փոքր խորշերով, որոնց մեջ գալարաձև մշակումով սյուներ են: Ծքամուտքերի կիսաշրջանաձև ճակատակալ քարերից վերև ձգվում է զարդագոտի, իսկ վերջինի վրա հովհարաձև շարված դեղին ու կանաչ գույնի սեպաձև քարեր են: Ներսում կան որմնանկարների հետքեր: Վարզահանի եկեղեցին իր ուրույն հարդարանքով ու հորինվածքի կարևոր առանձնահատկություններով (միմյանց հաղորդակցվող սեղանաձև աբսիդներ, գմբեթակիր սյուներ) տարբերվում է նույնատիպ հայկական հուշար-

---

[4] Նույն տեղը, գ. 165, թ. 4:

[5] Նույն տեղը:

[6] Նույն տեղը, թ. 2, 5:

[7] Նույն տեղը, թ. 4:

ձաններից (Ջորավար, Իրինդ, Տայոց քար, Անիի Փրկչի եկեղեցին) և կարևոր տեղ ունի Հայաստանի կենտրոնագմբեթ կառույցների զարգացման պատմության մեջ[8]:

Բացի վերը հիշատակված «ճարտարապետական շինուածք» եկեղեցուց, կային ևս երկու՝ Ս. Համբարձում և Ս. Աստվածածին եկեղեցիներ: Եկեղեցիներից մեկն ունեցել է 30 դեպատին կալվածք, մյուսը՝ ջրաղաց: Գյուղի շրջակայքում եղել են ուրիշ երեք սրբատեղիներ[9]:

Գավառակի կենտրոն **ԲԱԲԵՐԴ** քաղաքը Ճորոխ գետը բաժանում է երկու մասի: Որպես բնակավայր բերդաքաղաքը հիշատակվում է մ. թ. ա. երրորդ դարից: Պատմահայր Մովսես Խորենացին, պատմելով Սանատրուկ թագավորի մահվան հետ կապված դեպքերը, հայտնում է. «...երբ Բյուրատի որդի Սմբատը լսում է Սանատրուկի (մահվան) և նրա որդիների կոտորածի գույժը, առնում է իր երկու դուստրերին՝ Սմբատանուշին ու Սմբատուհուն, տանում-նստեցնում է Բայբերդում՝ քաջ մարդկանց ամրոցին պահապան դնելով...»[10]:

Հ. Ս. Էփրիկյանը կարծիք է հայտնում, որ քաղաքը կառուցվել է «Հայկազն Երուանդեան Տիգրանի Բաբ որդիէն... վասն զի հնագոյնները Բայբերդ կ'անուանեն...»: Նույն հեղինակի երկրորդ կարծիքով՝ «Մեր հին պատմութեան մէջ առաջին անգամ կը յիշուի Ա դարու վերջերը Երուանդայ օրերը, նոյն ատենները Սմբատ Բիւրատեան քաջը»[11]:

Բաբերդցի հայերը հիմնականում բնակվում էին չորս թաղամասերում: Ցուրաքանչյուր թաղ ուներ իր եկեղեցին և վարժարանը: Այս առթիվ հ. Ս. Էփրիկյանը տեղեկացնում է. «Հայոց եկեղեցիները թւով չորսն են՝ Ս. Աստուածածին, Հրեշտակապետ, Աստուածամայր և Ս. Ցովհան: Առաջին երկուքը կը յիշուին ԺԷ դարու սկիզբը գրոց յիշատակարանաց մէջ», ապա հայտնում, որ Ս. Աստվածածին եկեղեցին 1848 թ. վերանորոգվել է, իսկ մնացածները «ներքուստ մթին են եւ արտաքին երեւոյթն ալ խեղճ»[12]:

Բերդի արևելյան կողմում, բլրի վրա, հայկական գերեզմանոցն է, որտեղ տապանաքարերի վրա կան 1437 թ. արձանագրություններ:

Հայկական չորս թաղերը՝ Անթիքեչեն, Ղազիդաղը, Կալերը, Ղազիզադեն, գտնվում էին բարեկարգ վիճակում և հանդիսանում քաղաքի մշակույթային կենտրոնները: 13-17-րդ դարերում քաղաքում գրվել և ընդօրինակվել են ուրիշ ձեռագրեր, 19-րդ դարում տպագրվել է «Բողբոջ» անունով թերթը[13]:

Մեծ մարդասպանի՝ արյունոտ սուլթան Համիդի կոտորածների քաղաքականությունն իր աղետալի խոր հետքը թողեց գավառակի թե՛ ժողովրդագրության փո-

---

8 ՀՍՀ, հ. 11, Երևան, 1985, էջ 333:

9 ՀՀՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 144, թ. 4:

10 **Մովսես Խորենացի**, Պատմություն հայոց, Երևան, 1968, էջ 172-173:

11 **Հ. Ս. Էփրիկյան**, Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. Ա, Վենետիկ,1903, էջ 350:

12 Նույն տեղը, էջ 352:

13 **Ս. Ծոցիկյան**, Արևմտահայ աշխարհ, Նյու Ցորք, 1947, էջ 5:

փոխության և թե՛ մշակութային կյանքի ավերման վրա: Գավառակի ավելի քան 17 հազար, Բաբերդի շուրջ 3500 հայ բնակչությունից մնացին բեկորներ: Գավառակի 15 խոշոր հայկական գյուղերը՝ Քարավրակը, Բլրակը, Քսանթայը, Խուբսը, Լսհոնքը, Նիվը, Վարզահանը, Բլուրը, Հնտին, Ս. Թորոսը, Մալասան և այլն վերածվեցին ավերակի, լքվեցին բնիկներից. նրանց տեղը զբաղեցրին քոչվոր քրդերն ու թուրքերը:

Բարբարոսները բռնի կրոնափոխում էին կոտորածներից ազատվածներին և հայության մշակութային կոթողները՝ եկեղեցիները, կա՛մ ավերում էին, կա՛մ վերածում, լավագույն դեպքում, մզկիթի, հիմնականում անասնագոմերի: Ահա թե ինչու չորրորդ դարից սկսված եկեղեցաշինությունը, որը հրաշալիքներ պարգևեց նաև Բաբերդի գավառակին, աստիճանաբար մարեց, որովհետև քոչվորական պետության մտածողությունը հանգել էր այն հետևությանը, որ հայությանը ստրկացնելու ճանապարհներից մեկը նրա հոգևոր հարստության և հաստատության՝ Եկեղեցու կործանումն է: